Ինչպես ես մկրտվեցի

Ողջույն: Ես Արանոարիին եմ: Ապրում եմ Թահիթիում: Ես 11 տարեկան եմ և հպարտությամբ ասում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ:

Ինչպե՞ս եք իմացել Եկեղեցու մասին

Մի քանի ընկերներ իմ ընտանիքին հրավիրեցին Եկեղեցու միջոցառման: Մեզ նաև հրավիրեցին մի երեխայի մկրտության: Ես հարցրի մայրիկիս՝ արդյոք կարող եմ հանդիպել միսիոներների հետ, քանի որ իսկապես ցանկանում էի ավելին իմանալ Հիսուս Քրիստոսի մասին:

Ինչպե՞ս էին անցնում հանդիպումները միսիոներների հետ:

Միսիոներները շատ սիրալիր էին: Ես միշտ ոգևորությամբ էի նրանց հետ դասեր ունենում Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Ինձ դուր էին գալիս պատմությունները, որոնք նրանք պատմում էին, և խաղերը, որոնք մենք խաղում էինք: Դրանք օգնում էին ինձ սովորել:

ՀԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԵՓԱՆ ԱՍՅԵՖԻ

Ինչպե՞ս անցավ ձեր մկրտությունը

Հայրս մկրտեց ինձ և մայրիկիս իմ տասնմեկերորդ տարեդարձի օրը: Ես շատ երջանիկ էի: Մենք հրավիրել էինք շատ սիրելի մարդկանց: Իմ դասընկերները և ուսուցիչները եկել էին ինձ աջակցելու:

Երբ դուրս եկա ջրից, ուրախությունս անսահման էր: Ես ժպտում էի մինչև ականջներս: Անչափ ուրախ էի, որ կարող էի հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:

Ի՞նչ զգացումներ ունեցար առաջին անգամ Երեխաների միություն գնալիս

Սկզբում այնքան էի հուզվում, որ քիչ էր մնում լաց լինեի: Բայց հետո մասնակցեցի Երեխաների միության միջոցառման: Ես հնարավորություն ունեցա ծանոթանալ բոլորի հետ և ընկերացա մի քանիսի հետ:

Եթե դուք նորադարձ եք, իմ խորհուրդն է գալ Երեխաների միության ձեր դասարան, նույնիսկ եթե սկզբում վախենում եք: Մենք սիրում ենք նորեկներին:

Ինչպե՞ս եք դուք հետևում Հիսուսին

Ես աղոթում եմ և եկեղեցի եմ հաճախում ամեն կիրակի: Ես իմ ընտանիքի հետ խոսում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին:

Ես փորձում եմ ուշադրություն դարձնել ուրիշներին, որոնք օգնության կարիք ունեն: Տանը ես օգնում եմ մայրիկիս ամենօրյա գործերում: Ես օգնում եմ հայրիկիս խնամել այգին, փայտ կտրել և նորոգել որոշ բաներ: Մի քանի ամիս առաջ մեր ծխում տեղի ունեցավ տաղանդների շոու: Ես երաժիշտ եմ, ուստի ամբողջ երեկո թմբուկ նվագեցի:

Ի՞նչը *ձեզ* ամենաշատը դուր եկավ մկրտության ժամանակ:
Կամ ո՞ր իրադարձությանն եք ամենից շատ սպասում: